

Կանխագիտակ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ
ԳՐԱԿԱՆ

ԵՐ

ԱՌԱՋՆՈՐԴ ԼԱՑԱՌԱԿԱՆԱՑ



ԿՐԱՏԱՐԱԿԻՉ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ



ԽԻՐ 41



ՏՊԱԳՐԻՉ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ



ԽԻՐ




ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ՀԱՆԴԵՍ هانراکيداق HANRAKIDAG

ՀԱՐԱԹԱԿԱՆ مجموعه علوم JOURNAL ARMÉNIEN ENCYCLOPÉDIE

Զ. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ || ԹԻԻ 41 || 11 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1903



ԱՐՓԻՆԷ

Արդեօք շուշա՞ն զարնանային
Թե պասկեր է լուսնկային .
Հո՞ւվ քե մեհաֆ է մագին քել ,
Նս չեմ կրնար զանազանել :

Իր բերանը ֆնոյ՞՛ կըլոր ,
Ծաղկի բաժակ մ'է գոգաւոր՝
Նրբ նա ձայնը ձգած սիրուն ,
Կը սկսի շարֆն իր երգերուն :

Ու նուրբ՝ խարսեաւ յօնֆերուն տակ
Խայտ աչքերը քուխ կապուտակ՝
Գոցուին բացուին համեսօրէն
Մինչդեռ զինքը ծափահարեն :

Իր գիրգ ձեռքին եղայ գերի ,
Որ պատառիկ մ'է համբուրի ,
Բայց այն ձեռքը չարաննի ,
Զիս կ'ապսակէ առանց խղնի :

Մերկ սրբունգն ինձ ցոյց տայ լիջի ,
Նս՜կը սասեսմ՝ ան կը ժայտի .
Բայց ի՜նչ , կ'ուզե՞մ որ ամաչէ ,
Արփինէն դեռ տասը ամսու չէ :

Մ. ԱձԷՄԵԱՆ



ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԳՐԱԳԻՏՈՒԹԵԱՆ

ԼԵՆ ՇԻ ՆՈՐ ԱԶԳԵՐՈՐ

Դ.

ԶԻՆԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Զինարէն լեզուին մէջ ձայներու կազմուածքը շատ աղքատ է. ընդամէնը 472 նախնական միավանկ ունի, այսինքն 472 հնչմամբ իրարմէ հապէս տարբերող բառեր, սակայն այս բառերուն իւրաքանչիւրը 5 տարբեր ձայներով կը հնչուի, որով իրենց նշանակութիւնը կը փոխուի եւ որով անոնց թիւը հինգ անգամ կ'աւելնայ: Ասկէ զատ այս ձայներէն շատերն ալ իրենց յանգային հնչումն ունին որ դարձեալ կ'ստուարացնէ անոնց թիւը և 4000ի կը բարձրացնէ:

Օրինակ մը տանք հնչումի զանազանութեամբ բառին իմաստի մասին կրած փոփոխութիւններուն վրայ. Չու բառին եթէ ուն քաշելով և ձայնը բարձրացնելով արտասանուի, կը նշանակէ skv, միօրինակ եւ կամ երկարած ձայնով եւ վերջը բարձրացնելով՝ կը նշանակէ սիւն:

Զինական բոլոր միավանկերը բաղաձայնով կ'սկսին և ձայնաւորով մը կամ երկբարբառով մը և կամ ռնգային հնչումով մը կը վերջանան. միակ եօլ (ականջ) բառն է որ ձայնաւորով մը կ'սկսի եւ բաղաձայնով կը վերջանայ:

Հին նախնական գիրը որ ճշմարիտ պատկերագրութիւն մըն էր, կը գտնուի հին յիշատակարաններու վրայ և հետաքրքրական է դարերու ընթացքին մէջ այդ նշաններուն կերպարանափոխութիւնները դիտել. այլ ևայլ գրական գրութիւններ հաստատուած են որոշապէս եւ շատ դարեր գործածուելէ ետք, մասնաւոր պարագաներու բերումով՝ փոխուած: Ասկէ զատ, այսօր ալ գիրերու զանազան տեսակներ ունին, մասնաւոր տեսակ մը ընթացիկ գիր՝ որ սովորական յարաբերութիւններու մէջ կը գործածուի:

Զինարէնը իր բառական աղքատութիւնը կը դարձանէ բառերու այլ ևայլ յօդումներով, որով կարելի կ'ըլլայ ամէն զազափար

բացատրել, կը կազմէ նաեւ բարդ բառեր որոնք գլխաւոր գաղափարէն զատ, երկրորդական գաղափարներ կը յայտնեն, ինչ որ կ'օգնէ Ձինարէնին միանվանկային լեզու փնտլուն:

Իսկ յանգակոն պակասութիւնը կը լրացնէ բառերու դիրքովը, ասով կ'որոշուին բառերու առնչութիւնները. ժամանակի, տեղի, եղանակի պարագաները, սեռի, թիւի, դէպքի տարբերութիւնները: Ընդհանրապէս խօսքին մասերը սապէս կը յաջորդեն իրարու, տէր բայի, բայ, սեռի խնդիր, բնութեան խնդիր. որոշիչ բառերը որոշեալներէն, ամականը գոյականէն, խնդիրը խնդրառու գոյականէն, մակբայը բայէն եւ երկրորդական կամ լրացուցիչ նախադասութիւնները գլխաւոր նախադասութենէն առաջ կը դրուին: Կրնան շատ գոյականներ կամ բայեր իրարու յաջորդել թէ իրբեւ թուում կամ նոյնանիշերու շարք եւ թէ՛ իրբեւ որոշիչ կամ լրացուցիչ մէկմէկու. այն ատեն առաջին բայերը կը նկատուեն իրբեւ մակբայ կամ իրբեւ բայանուն հետեւորդներուն, կամ թէ ասոնք իրբեւ բայանուն եւ խնդիր նախորդներուն:

Այսպէս Ձինական լեզուի շարադասութեան մէջ բառերու կարգը մեծ դեր կը կատարէ եւ մեծ ազդեցութիւն ունի հոլովումներու, խոնարհումներու եւ այլ մասնիկներու պակասը լրացնելու մասին: Մասնիկներու թերին լրացնելու համար ուրիշ եղանակ մըն ալ է երկրորդական բառերու գործածումը, օրինակի համար, ուստի ըսելու համար Ձինարէն կ'ըսէ նանցե, ցե (որդի) եւ նան (արու) բառերով, եւ դուստր նշանակելու համար կ'ըսէ նիուցե, ցե եւ նիու (էգ) բառերով:

Թիւը ընդհանրապէս խօսքին ամբողջութենէն կը հասկցուի. բայց երբեմն ալ յաճախութիւն նշանակող բառի մը յաւելմամբ, օրինակ դօթին (շատ մարդիկ):

Ձինացիք իրենց արմատները երկու դասի կը բաժնեն, լեցուն բառ (չէօ-ցէօ) որոնք ինքնին եւ իրենց գիրքէն անկախ յատուկ նշանակութիւն մը ունին եւ դպսարկ բառ (չիւ-ցէօ) որոնք լեցուն բառերուն մէկմէկու հետ ունեցած առնչութիւնները կը ցուցնեն: Այս դատարկ բառերը երբեմն իրենց յատուկ նշանակութիւնն ունեցած են, բայց տակաւ կորսուելով, մի միայն բառերու վերաբերութիւնը նշանակելու գործածուած են, ուստի երբ Ձինացի դաստիարակը հարցուցած է իր աշակերտին «Ի՞նչ է քերականութիւնը». սա պատասխաններ է «Յոյժ օգտակար արուեստ մըն է որ մեզ կ'ուսուցանէ որոշել լեցուն բառերը դատարկ բառերէն»:

Ձինարէնն ալ ունի՝ մերինին պէս՝ իր հին եւ նոր լեզուները. Գուվեն եւ Շեօվեն ու թիւն-հօա, այնպէս մը որոշ եւ անջատ մէկմէկէ որ կարելի է մէկը գիտնալ եւ միւսն անգիտանալ. առաջինը դա-

տական մատենաներու լեզուն է շատո՞նց մեռած. իսկ երկրորդը՝ տակաւին խօսուած ու գրուած լեզուն:

Այս վերջինը այլևայլ բարբառներ (dialecte) ունի, որոնք մանաւանդ հնչմամբ կը տարբերին իրարմէ: Քուան-հօա ըսուածը, զոր Եւրոպացիք Մանսարիցական լեզու կը կոչեն, կեդրոնական և հիւսիսային գաւառներուն մէջ խօսուած լեզուն է և կը գրուի մանաւանդ ռամիկներէն: Գիրքերը կը գրուին վեց-հօա լեզուով՝ որ հին դասականին եւ մանտարինականին մէջտեղ բռնող լեզու մ'է և միայն գրագէտներու հասկնալի: Ամէն գաւառի ռամկական լեզուին դու-հօա անունը կը տրուի:

ԲԻՄԷՏ

ՆԱԽԹԻ ՀՈՐԵՐ

(Շարունակութիւն 40րդ Թիւէն)

Ամերիկացիք կը նախանձին կովկասեան քարիւղին վրայ, և Միացեալ Նահանգի կազմի թագաւորները, կ'սկսին Ատլանտեանի մէջ նետել քարիւղ փոխադրող շոգենաւներն: Տարակոյս չկայ որ Ամերիկայի հանքագործ կալուածատէրերն պիտի հետեւին Պարոն Քլէման Տիւվէրնուայի հետեւեալ խրատին առ Նարօլէոն Գ. ուղղած, « Տէ՛ր արքայ, պէտք է ամէն բանի մեծը շինել »: Փոխանակ 750 տակառ պարունակող նաւեր ունենալու, 2000 տակառաչափ նաւեր պիտի շինեն եւ ատով երբէ՛ք չպիտի բաւականանան Ամերիկացիք, որովհետեւ շատ լաւ համոզուած են թէ՛ ճարտարութեան տի գաւառին վրայ յաղթանակը՝ միշտ աշխատողին կողմն է:

Եթէ անաչառ կերպով դիտենք արդի ճարտարութեան պատմութիւնը, պիտի տեսնենք որ մարդ այն ատեն միայն պիտի դադրի գործելէ՝ երբ յաջողի իր գտած նիւթական սկզբունքները իրեն ծայրագոյն աստիճանին հասցնել: Երկաթեայ ուղիներն այն ատեն պիտի դադրին՝ երբ ամբողջ ցամաքն երկաթուղիներու ցանցով մը ծածկուի: Ելեքտրական հեռագիրն կ'անցնէր ամէն անապատներէ, ամէն ովկէանոսներէ, և ամէն անծանօթ աշխարհներէ, բայց անթել հեռագիրը եկաւ անոր տեղ գրաւել, եւ կարելի է օր մ'ալ զինքը վտարող նոր գիւտ մը հնարուի: Այսպէս նաև քարիւղի հանքերն Միացեալ Նահանգաց մէջ հնարուեցան, այսօր մուտ գտած են կովկասու մէջ ևս, և ամենամեծ խորհուրդն է Պաքուէն ի Պաթում հաստատել երկաթուղոյն երկայնութեանը

խողովակ մը, որ 50 միլիոն ֆրանքի ծախք մը ունի և հսկայ մեքենաներու միջոցաւ քարիւղը պիտի ճանապարհորդէ Պաքուէն Պաթում: Եթէ երբէք օր մը այդ խողովակներն բազմանան, եթէ երկրորդ աւելի հրաշակերտ յատակագիծ մը խողովակ մ'ես հաստատուի կովկասէն մինչեւ Պարսից ծոցը այն ատեն քարիւղի վաճառականութեան վիճակը բոլորովին կ'փոխուի, և Հնդկաց ովկիանոսի շոգենաւերն աւելի մեծ մղում մը պիտի տան քարիւղի ճարտարութեան: Բոլոր այս գեղեցիկ խորհուրդներն գիտութեան աջակցութեամբ պիտի իրականանան օր մը, ինչ որ կ'ընեն այսօր Ամերիկացիք Ուաշինկիթընի երկրին մէջ:


Վերջացնելէ առաջ սոյն գլուխն, աստ կ'աւելցնենք Մ. Կ. Շահնազարի հետեւեալ իրական նկարագրութիւնն, որ կը վերաբերի Կովկասու քարիւղի առատութեան ո՛չ միայն ցամաքի, այլ ծովուն մէջ ալ:

«Այս օրերս Պաքուի մէջ աննման տեսարանի մը տկանատես եղայ: Օրեր առաջ իմացած էի թէ ժամ մը հեռուն նաւթային դաշտերու ծովեզերքէն քիչ մը անդին, հոն ծովը կ'այրի: Այրո՞ղ ծովն, ի՞նչ տարինակ վերնագիր է, մասնաւոր շոգեմակոյղներ կան հետաքրքիր բազմութիւնը տանելու համար այդ տեղ: Գիշերուան Տին (Ը. Ե.) ճամբայ ելանք ուրալով Կասպից ծովու անխաղաղ ալիքներուն վրայէն. կը յիշէի Վոսփորի գեղազմայլ այն երեկոն, ուր լուսնի արծաթէ շողերուն մէջէն մեր նաւակը կ'ընթանար մեղմա՛վար՝ մանրիկ ալիքներու արծաթէ կաթիլներ ցայտեցնելով: Է՛հ, որքա՛ն տարբերութիւն, հոտ կապոյտ, հոս ալ կապոյտ, այդ տեղի հրապուրիչ ջինջ կապուտին և այս տեղի անմաքուր, գորշ եւ նաւթահա՛մ կապուտին միջեւ: Մեր շոգեմակոյղը կը հասնի մէկ ժամէն Պաքուի նաւթառատ ստհմանին, Պիպիէյաթի ծովեզերքին մօտ: Կը լսենք արդէն հեռուէն ֆոնքաններու խփումը, մեքենայից խլրտեցուցիչ աղմուկին նման, նաւթը կը վիժէ հեղեղներով, օգը կը լեցնէ իւր դղրդիւնով. մութին մէջ կարելի է նըշմարել սև թանձրագոյն մուխ մը, որ կը պատէ հորիզոն: Ատոնք նոպէլի, Զուպալովի ֆոնթաններն են, որոնք միլիոններ կ'արտաժիթեն:

«Շոգեմակոյղը կանգ կ'առնու, և ստորոտը կը տեսնենք ջուրերու յորձանք մը, սպիտակ, ոլոր ոլոր դարձդարձիկ ալիքներու անսովոր եռուզում մը: Մի քիչ հեռու, ուրիշ մ'ալ այդպէս. ճախ կողմերնիս մէկ ուրիշ յորձանք ալ: Շրջապատուած ենք յորձանքներէ: Լուցկի մը կը վառեն, բամպակի կտոր մը կը բռնկեցնեն և այդ յորձանքներէն միոյն մէջ կը նետեն: Ի՞նչ զարմանալի և տարօրինակ տեսարան մը կը պարզուի առջեւնիս: Ալիք-

ները կը բռնկին, կ'որ կ'որ կը դառնան լայնարաց հորի մը բերանին շուրջը, Երկար, լայն բոցեր կ'արձակեն եւ կը մարին միայն հեռուէն եկող խոշոր ալիքի մը ծանրութեան ներքեւ: Անդին ուրիշ մ'ալ կը բռնկցնեն, ուրիշ մ'ալ անդին: Մեր շոգեմուկոյկը բոցերէ չըջապատուած է: Կը վախնամ' որ մենք ալ չբռնկինք: Բայց ոչ, վասն զի հրդեհը յորձանքին սահմանէն անդին չանցնիր: Որքան հետաքրքրական տեսիլ է: Դիտէ՛ ժամերով եւ չես յագեցնար, եւ մտածել կ'սկսիս թէ՛ ի՞նչ հրաշալի երեւոյթ է բնութեան, որ նոյն իսկ ծովը ինքնին նաւթ կ'արտադրի: Թային յորձանք կը կալմէ եւ կապոյտ ջուրերու միջեւ սպիտակ գորշ նաւթի աղբիւր մը միշտ կ'եռայ այսպէս: Հարց է թէ՛ ինչո՞ւ ասիկա չեն շահագործեր: Դեռ ժամանակը չէ եկած: Երբ ցամաքը չորնայ, այն ատեն ծովուն կը դիմեն: Եւ մինչեւ այն ատեն հասարակ մահկանացուներն հիանալով կը հիասթափին բնութեան այս ութերորդ հրաշալիքին վրայ »:

Այս է ահա՛ Կովկասեան քարիւղին արդի վիճակն, որ հետզհետէ զարգանալու եւ բարգաւաճելու վրայ է. երկրին կարեւորութիւնը, Պաքուի դիրքը, հանքերու շահագործումը, հանելու եւ զտելու եղանակն եւ փոխադրութեանց միջոցներն ու չափերն, որոց վրայ համառօտ ակնարկ մ'արձակելէ վերջ՝ կը մնայ մեզ խօսիլ յաջորդ թերթով Պաքուի ատրուշաններու եւ կրակապաշտ Հնդիկներու վրայ:



ՄԱՆԿԱՌԹԵԱՆ ՅԻՄՆԱԿՆԵՐ

Թոնիրին շուրջ նստած անհոգ,
Ձեռքս կարմիր մի փերական,
Կ'ըսէի դասս խելօք, խելօք
Մօրկանս առջեւ իմ սիրական:

Փսիկս իմ փով կը խաղկըսար,
Քսուրքելով ձեռքիս, ոտքիս,
Մինչ շունս՝ անդին գլուխը դարվար,
Անբարք նայէր մեզ երկուքիս:

Կուռքն՝ ալ սիրուն իր ձագերով
Ձի՛գ, ձի՛գ, ձի՛գ, ձի՛գ կը կտկար,
Ու երբ կու՛ս մը գտնէր՝ սիրով
Ձայն ձագերուն կանչէր, կուսար:

Որք երբեմն ալ գալով մեր հով՝
Թռչեին ձեռքիս, ուսիս
Ու իրենց անուշ, պզտիկ երգով
Կը դիւթէին շարունակ զիս :

Քայց ես հանդարտ ու խելօքիկ
Կը կարդայի գիրքս սիրուն .
— Ի՞նչ բաներով մի՛չս իմ մայրիկ
Սերս կը կապէր այն գրերուն... :

Եւ ի՛նչ սիրով անհուն, յսակ
Կը համբուրէր զիս շատ անգամ
Երբ հեգէի բառ մը շիտակ .
— Ո՛ր սիրավառ սիրտ մայրական... : —

* * *

Իսկ ա՛րդ երբեմն յոգնած, լերդող²
Երբ գլուխս առած ձեռներուս մէջ՝
Կ'ուզեմ մոռնալ հոգերս հնչող
Հի՛ն մօծիլներ³ ծնին անեղ :

Եւ կարօտով նայիմ չորս դիւս ,
Ո՛ր է այն կեանք մաքուր, համեղ ,
Թոնիրն , երդիքն , հաւն՝ որ արթն
Կուսային միշտ խինդեր անմեղ :

Կապոյտին մէջ՝ որ կը հալի
Փնփնում ի զո՛ւր մօրս պատկեր .
Թեւերը բաց , վա՛ն , սխալի՛ ,
Որպէս յանախ զիս կը գրկէր... :

Լ. ՍՐԱՊԵԱՆ

¹ Թուխս դրուած հաւ : ² Տխուր : ³ Կայծեր :

ՊՋՏԻԿ ԾԱՌԻ ՄԸ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Ժամանակաւ անտառի մը մէջ խիտ տերեւներով ծածկուած պզտիկ ծառ մը կար:

« Ա՛հ, ըսաւ օր մը, իմ դրացիներս շատ երջանիկ են, և իրենց տերեւները դիտողին աչքին խիստ հաճելի կ'երեւին, սակայն իմիներս՝ աւելի պէս են, անոր համար ոչ ոք կը համարձակի քովս մօտենալ և գգուել զիս: Կը փափաքէի ըլլալ աւելի գեղեցիկ քան իմ դրացիներս, եւ ունենալ հսկեայ տերեւներ »:

Գիշերը հասաւ. պզտիկ ծառը քնացաւ: Հետեւեալ առտու տեսաւ թէ այլափոխուած էր:

« Ի՛նչ երջանկութիւն, աղաղակեց. ահաւասիկ ոսկեայ տերեւներով զարդարուած եմ. անտառին մէջ ո՛չ մէկ ծառ ինծի պէս զարդարանք ունի »:

Բայց իրիկունը մօտենալուն՝ կռնակը տոպրակ մը շալկած երկայն մօրուքով, չորցած ձեռքերով մարդ մը եկաւ. երկիւղած ակնարկ մը նետեց անոր վրայ եւ անգամ մըն ալ բոլորտիքը նայեցաւ, զի մի՛ գուցէ տեսնող մը ըլլայ զինքը. ու երբ համոզուեցաւ թէ մէկը չիկայ, բրցուց ոսկեայ տերեւները, լեցուց զանոնք տոպրակին մէջ ու աներեւութացաւ:

« Ա՛հ, ըսաւ պզտիկ ծառը, կը ցաւիմ այս գեղեցիկ տերեւներուս համար, որք կը փայլէին արեւին ճաճանչներուն տակ. Բայց ապակեայ տերեւներ կրնան աւելի փայլուն եւ թափանցիկ ըլլալ, կը փափաքէի անոնցմէ ունենալ »:

Գիշերը հասաւ, քնացաւ պզտիկ ծառը ու հետեւեալ առտու արթննալուն տեսաւ որ ապակեայ տերեւներով զարդարուած էր:

« Ա՛հ, ըսաւ. ահաւասիկ սիրուն զարդարանք մը զոր կը վայելեմ. շատ ուրախ եմ որ՝ դրացիներս չունին ասոր նմանը »:

Բայց շատ չանցաւ, սեւ ու մթագին ամպեր դիզուեցան երկինքին երեսը. հովը փչեց ուժգին. փոթորիկներ ու փայլակներ իրար անցան ու բոլոր ապակեայ տերեւները խորտակուեցան:

« Աւա՛ղ, մրմռաց ժպտելով ունայնամիտ պզտիկ ծառը, խիստ վայելուչ էին այս տերեւներն որոնցմով կը զարդարուէի, սակայն ի՛նչ օգուտ՝ չուտով անցան: Ինքզինքս աւելի երջանիկ պիտի համարէի՝ եթէ կանաչ ու հոտաւետ տերեւներով զարդարուէի »:

Գիշերը հասաւ, պզտիկ ծառը քնացաւ նորէն եւ հետեւեալ առտուն արթնցաւ տեսաւ թէ իր փափաքածին պէս ձևափոխուած էր. սակայն իր նորաբողբոջ, թարմ տերեւներուն հոտը իրեն վրայ հրաւիրեց այծերու խումբը, որոնք իրենց ետեւի ոտ-

քերուն վրայ ցցուած կրծեցին իր կանանչ ու հոտաւէտ տերեւները մինչեւ ցգագաթ և գայն թողուցին բոլորովին մերկ:

Այն ա են պզտիկ ծառը զգաց իր հպարտ փափաքներուն յիմարութիւնը եւ զղջաց:

Գիշերը հասաւ, քնացաւ սովորականին համեմատ ու հետեւեալ առտու արթնցաւ տեսաւ թէ ի՞նչ ուրախութիւն, իր նախկին տերևներով ծածկուած էր: Անոնք չունէին ոչ ոսկիի փայլը, ոչ ապակեայ թափանձումն եւ ոչ ալ փափաքած տունկերուն ձգողութիւնը, այլ ասոնք իր բնական, ստոյգ տերեւներն էին: Ալ մէկը երբէք չպիտի մօտենար իր տերեւները բրցունելու եւ անոնք պիտի մնային անվնաս բոլոր եղանակաց մէջ:

Թարգմ. Հ. Ս. ՔԵՐԹՄԵՆԵԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ՎԵՊ

ՕԴԻ ԱՐԳՈՆԱԽՈՐԴՆԵՐԸ

Հարաւ-արեւմտեան գծին վրայէն անցնող կառախումբէն որ դէպ ի Ուօրչէսդըր կը մեկնի, կը տեսնուէր Մօնզօնի թռչող մեքենային թռիչքը սահմանաւորող ահագին տանիքը: Գրեթէ երկու մղոն երկայնութեամբ անցք մը կը ձեւացներ ան՝ կազմուած գերաններով, պարաններով ու երկաթեայ տախտակորմով:

Մաքսիմի ձգած կէտէն սկսած էր Մօնզօն՝ ամենեւին բանի տեղ չդնելով օրագիրներու տգէտ քաջքուքները որոնք վհատեցուցած էին իր նախորդը: Կ'ըսէին թէ իր անհատնում հարձապութեան կէսը արդէն վատնած էր ան առանց գոհացուցիչ արդիւնք մը ձեռք բերելու յաջա արդի անհամբեր սերունդին: Ուօրչէսդըր-Բարքի այդ մետաղեայ հսկայ շինութեան աւարտումէն հինգ տարի ետքը, երբ տակաւին Մօնզօն թրաֆալկար Սքուարի վերեւ չէր թռել, ամէնէն խոհական մարդիկն իսկ՝ հնարելու մարմաչէն բռնուած խենդի մը տեղ չդնելով հանդերձ, համբաւ չահելու ետեւէ եղող սնամիտ մէկը ըլլալ կը կարծէին զայն:

Եւ սակայն, երբեմն, առաւօտուն կանուխ անցնող կառախումբին ճամբորդները կը տեսնէին ճերմակ ճիւղ մը որ գերան-

ներու եւ չուաններով ճամբուն մէջէն կը յառաջանար մինչեւ որ դիմացի արգելքին զարնուելով կանգ առնէր :

Մօնզօն առաջները բնաւ չնեղացաւ մամուլին արտայայտած կարծիքներէն : Գուցէ լաւ հաշուած չըլլալուն համար թէ որքան ժամանակ պէտք է օգտին նաւարկութեան օրէնքները ուսումնասիրելու եւ ամէն մթնոլորտական յանկարծական փոփոխման դիմացով մեքենայ մը շինել կարողանալու համար : Նոյնպէս չէր կրցած գուշակել թէ որքա՛ն գումարներ ծախսելու պիտի պարտաւորուի մտադրած նպատակին հասնելու համար : Պարբերաբար ծրար մը կ'ընդունէր՝ թերթերու սիւնակներէ կտրուած՝ որոնք իր վրայ կը խօսէին եւ զոր անծանօթ ձեռք մը հաւաքելով իրեն կը հասցնէր : Նոյնպէս պարբերաբար պանքային հաշուընթացը կ'ընդունէր . եւ եթէ հոգը չէր ըներ ուրիշներու անտարբերութիւնը կամ ծաղրը շարժելը , չէր ալ կրնար չյուզուիլ տեսնելով որ մոռցուելու վրայ է , ժամանակը կ'անցնի եւ կամաց կամաց դրամը սպառուելու վրայ է : Ա՛լ անցած էին այն ատենները երբ Մօնզօն ճամբու կը դնէր քանի մը գաղտնիք կորզելու համար հասնող օրագիրները , թէեւ անոնց չգալովը հիմա աւելի գոհ կը մնար ինք : Օր օրի գործը կը յառաջանար և մեքենային կառավարելու յարուցած դժուարութիւններն ու արգելքները երթալով կը նուազէին . օր օրի սակայն , դրամն ալ կը հատնէր , մինչեւ որ հաշուեկշիւին տարբերութիւնը քանի մը տասնեակ հազար ֆրանք միայն կը ցուցնէր : Վերջապէս տարելիցի օր մը եկաւ :

Մօնզօն , յատակագիծերու աշխատանոցին սեղանին առջեւ նստած էր , երբ Ուտհաուզի օրացոյցին վրայ տեսաւ ամսաթիւը :

— Գործի սկսելնուս ի վեր այսօր ճիշդ հինգ տարի կ'ընէ , ըսաւ յանկարծ :

— Իրա՞ւ , պատասխանեց Ուտհաուզ :

— Սա անվերջանալի բարեփոխումներն են որ սատանի խաղ կը խաղան մեզի , ըսաւ Մօնզօն գծագրութեան ասեղիկ մը խածնելով :

Յետսակողմի նոր շարժիչ անիւներու ծրագիրները կային իր սեղանին վրայ :

— Այս բարեփոխումները , շարունակեց , արդեօք չափազէտները պիտի կարողանայի՞ն այնքան յառաջ երթալ հաշուելու մէջ , որպէսզի մենք ալ ազատէինք փորձերէն եւ առ խարխափ միջոցներու երկարատեւութենէն : Հինգ տարի՝ . . . անյաջողութիւններու մէջէն բան սորվի . . . երբ կարելի է հաւատալ թէ ասոնք հաշուելով ալ առաջունէ կը գուշակուէին . . . հապա եղած ծախ-

քերը : Այդ գինով դիտական կաճառէն երեք պսակեալներ կըր-
նայի վարձու բռնել յաւիտեան . . . բայց անո՛նք ինչ պիտի ընէին,
քանի մը անօգուտ տեսութիւններ պիտի հաստատէին : Ի՛նչ ժա-
մանակ անցա՛նք , Ուտհաուզ :

— Այս կաղապարները ձուլելու համար առնուազն երեք շա-
բաթ պէտք է , ըսաւ Ուտհաուզ :



— Երե՛ք շաբաթ :

— Ամէնէն քիչ երեք շաբաթ, կրկնեց Ուտհաուզ, որ առաջ-
նակարգ մեքենագէտ , բայց շատ անյաշողակ մխիթարիչ մըն էր :
Իր առջեւ առաւ գծագրութիւնները եւ գիծերու շուքեր տալ
սկսաւ : Մօնզօն եղունգները կը կրծէր եւ Ուտհաուզի գլուխը
կը դիտէր անթարթ աչօք :

— Որքա՛ն ատենէ ի վեր Մօնղօնի անհեթեթութեան վրայ կը խօսուի, հարցուց յանկարծ:

— Ո՛հ, գրեթէ տարիէ մը ի վեր, պատասխանեց Ուտհաուզ անտարբեր շեշտով մը եւ առանց գլուխը վեր առնելու:

Մօնղօն ակռաներուն մէջէն սուլելով պատուհանին քով գնաց, երկաթի հսկայ գերանները կը տեսնուէին որոնց ետեւը ծածկուած կը մնար թռչող մեքենան: Աւելի հեռուն կը տարածուէր իզէրի գիւղանկարը, Կառաշար մը կը սահէր առանց աղմուկի երկաթեայ գիծերուն վրայէն եւ Մօնղօն կը կարծէր նշմարել ծաղրածու դէմքեր, որոնք պատուհաններէն դուրս կը դիտէին իր կազմածները: Յած ձայնով լուտանքներ սկսաւ տեղալ եւ կատաղութեամբ սատկեցուց խոշոր ճանճ մը որ պատուհանին վրայ կը բզզար:

— Ի՞նչ կայ, ըսաւ Ուտհաուզ զարմացած ակնարկ մը ձգելով իր պետին վրայ:

— Ա՛յ զգուի՛լ սկսայ բոլոր ասոնցմէ:

Ուտհաուզ այտը քերեց եւ գծագրութիւնը անդին հրելով. « ո՛հ » մը արտասանեց:


— Ի՞նչ անմիտ մարդեր... Ես նոր տարր մը կը փորձեմ իրականել որ կեանքի երեւոյթները վեր ի վայր ընէ եւ փոխանակ իմ հետախուզումներուս խելամտօրէն շահագրգռուելու տխմար ծաղրանքներ կ'ընեն եւ ապուշ անուներ կը դնեն մեքենաներուս:

— Աւանակներ են անոնք, ըսաւ Ուտհաուզ նորէն գծագրութիւններուն վրայ նայելով:

Թարգ. Չ. Ն. ՊԵՐՊԵՐԵԱՆ

(Նար.)

Հ.-Կ. ՈՒԷԼՈ



Ուր մոլութիւնը կը տիրէ, չկարծենք որ հոն միտքի հանդարտութիւնը և հաճոյքը կրնան բնակիլ:

Առանց անմեղութեան, երկրի վրայ ո՛չ հանգիստ կայ ոչ ալ իրական երջանկութիւն:

Վարմունքներու մէջ գոռոզութիւնը՝ անմիտներու մոլութիւնն է:

Պատմութիւնը այն առաջին ուսուցիչն է զոր պէտք է տալ տղաքներուն, և որ կրնայ հաւասարապէս զբօսցնել ու կրթել զանոնք, կազմել անոնց միտքը և սիրտը, անոնց յիշողութիւնը զարգացնել շատ մը դէպքերով այնքան օգտակար՝ որքան հաճելի:

ԺԱՄԱՆԱԿԱԿՑ ՆՇԱՆԱԻՈՐ ՆԿԱՐԻՉՆԵՐ

18^{րդ} ԴԱՐԷՆ ՄԻՆՁԵԻ ՄԵՐ ՕՐԵՐ

ԱՆԳԼԻԱՅԻ ՆԿԱՐԻՉՆԵՐ

Հօկարթ (Ուիլեամ) . — Ծնած Լոնտոնի մէջ 1697ին , մեռած 1764ին : Ստեղծիչը եղած է նոր սեռի մը՝ զաւեցտական ճկարչութեան՝ որ բուն իսկ անգլիական ինքնատիպութիւնը կը բովանդակէ : Չեւերուն եւ տիպարներուն գեղեցիկ ըլլալուն կամ չըլլալուն հոգ չընեն , միայն ճշմարիտ արտայայտութիւն մը տալը կը փնտռէ՝ նոյն իսկ ամէնէն թագուն զգացումներուն : Իր նկարներուն մէջ արուեստը անտես առնուած է՝ ամէն ինչ բարոյագէտ նկարչին մտածումներուն ծառայեցնելու համար : Գործերը՝ Անառակին ասպարէզը , Նորաձեւ ամուսնութիւնը :

Րէյնօլս . — Ծնած ի Բլիմթըն 1723ին եւ մեռած Լոնտոնի մէջ 1792ին , Սքանչելի կենդանագրիչ մը : Կամքին ուժովը կարող եղաւ շուտ արուեստին վրայ հաստատած տեսութիւնները՝ իբր տաղանդ արտանշել : Ինքն էր իտալական ճաշակով յղացուած մեծ նկարչութեան գողափարը եւ՝ ինչ մէջ տարածողը : Յղացումի ճարտարութիւնը , գոյներու ներդաշնակութիւնն եւ շնորհալիութիւնը՝ գինքը առաջին նկարիչներու կարգը կը դասեն : (Գործերը՝ Անմեղութեան տարիքը , Յոյսը կը մխիթարէ սէրը , Լորա Շէֆֆիլտ) :



ՐԷՅՆՕԼՏՊ

Կենսպուրձ (Թոմաս) . — 1727—1788 . Րէյնօլտս կենդանագրիչ էր շնորհիւ աշխատեալ արուեստին ու գիտութեան . Կէնըսպուրձ սուելի բնագրեցիկ . քիչ արուեստակեալ է : Պարզ ու թափանցող լուսանկարիչ՝ առաջին տեսքով կը տխրեցնէ : Գոյները՝ ամէնէն պարզ ու միօրինակ տեսքէն սկսեալ կը հասնին մինչեւ գունապնակին ամենանուրբ ու այլազան երանգներուն : (Գործեր՝ Կապոյտ տղան , Միս Կրահամ , Ամարանոցին դուռը) :

Պիչի (Ուիլեմ) . 1752—1839 . — Խիստ մեծ համբաւ մը հասնեց մի միայն կենդանագիրներ գծելու : Արուեստին մէջ : Կ'ըսեն թէ ահագին քանակութեամբ կենդանագիրներ շինած է : 64 տարեկան հասակին՝ Գեղարուեստական կաճառին մէջ ի ցոյց դրաւ 360

կենդանագիր: (Գործեր՝ Ժողէֆ Նօչէքէս, Ճօն Ֆիլիբ Բէմպլ, Եղբայր ու Բոյր):

Րիպրոն (Հեքրի). — Ծնած էտիմպուրկի շրջակայքը 1756ին, մեռած 1823ին:

Հօբնէր (ձօն). — Ծնած 1758ին, մեռած Լոնտոնի մէջ 1816ին. Երկուքն ալ նշանաւոր կենդանագրի նկարիչներ եղած են: (Գործեր՝ Րիպրոնի՝ Արուեստագէտին տղան, Լորտ էտուին: — Հօբնէրի գործերը՝ Ուիլեմ Բիթ. Սիթ. Բրէնսէս Սփիա):

Մօրլանս (Փօրժ). 1763—1804. — Տասը տարեկանին. Լոնտոնի Արքայական Կաճառին մէջ ընդունել տուաւ իր մէկ քանի նկարները: Հակառակ յուզումնալից կեանք մը անցուցած ըլլալուն՝ արտադրած է քանի մը նկարներ, որոնք թանկագին արժէք մը ստացած են: (Գործերը՝ Դատաւորը, Պանդուկին վճարումը):

Ձ Ե Ռ Ք Ը

Սէն-Դյուլի խորհրդաւոր գործի մասին իւր կարծիքը կը յայտնէր Հարցաքննիչ Պ. Բէրմիւղիէ, որուն բոլորտիքը շրջան մը կը կազմէին զանազան ունկնդիրներ: Այս անբացատրելի ոճիւրն ամսէ մը ի վեր խելացնոր վիճակի մէջ կը դնէր ամբողջ Բարիզը, սակայն ոչ ոք կարողացած էր խելամուտ ըլլալ այդ խնդրին:

Պ. Բէրմիւղիէ, կանգնած եւ կռնակը վառարանին կռթնցուցած, առանց որոշ եզրակացութեան մը յանգելու կը խօսէր. փաստեր կը համախմբէր և կը վիճարանէր տարբեր կարծիքներու դէմ:

Բազմաթիւ կիներ, անոր աւելի մօտենալու համար կ'ելնէին իրենց տեղերէն եւ աչքերն սեւեռելով Հարցաքննիչի ածիլուած բերնին, ուրիշ ծանրակշիռ խօսքեր կ'ելնէին, կանգնած կը մնային յաճախ: Անոնք կը սարսուռային ու կը դողդղային տոչորուած իրենց հետաքրքրաշարժ երկչոտութենէն եւ ագահ ու անյագ պէտքէն այն զարհուրանքին, որ կը կրկնուէր յաճախ իրենց հոգիին մէջ եւ կը տանջէր զանոնք անօթութեան նման:

Նոր լռութեան պահուն, ունկնդիրներէ մին, որ միւսներէն աւելի տփփոյն էր, ըսաւ. « Սոսկալի՛ է այս, մարդ ոչինչ պիտի կարողանայ գիտնալ որովհետեւ գերբնականի կը մօտենայ այս »:

Հարցաքննիչը դառնալով անոր, — Այո՛, տիկին, հաւանական է թէ ոչ ոք պիտի կրնայ բան մը հասկնալ, սակայն յարմար տեղը չէ հոս գործածելու գերբնական բառը, զոր դուք արտասանեցիք քիչ առաջ: Այժմ ներկայութեանը կը գտնուինք այնպիսի

խիստ ճարտարորէն գործադրուած և գաղտնիքներով լաւ շրջապատուած ոճիւրի մը, զոր չենք կրնար անջատել զինք պատող պարագաներէն: Բայց ժամանակաւ նոյն ինքն ես հետեւած եմ այնպիսի գործի մը, որուն մէջ, ճշմարիտ որ, մտացածին բաներ խառնուած կ'երեւէին, եւ ասկէ զատ լուսաբանելու միջոցներ չը լինելուն պատճառաւ հարկ եղաւ լքել զայն:

Եւ ունկդիրներու ստիպումին վրայ սկսաւ պատմել:

« Ժամանակաւ հարցաքննիչ էի Աժագսիոյ մէջ, փոքրիկ ըսպիտակափայլ քաղաք մը, որ տարածուած էր բարձրաբերձ լեռներով շրջապատուած ծովախորշի մը եզերքը: Հո՛ն, հին ատելութեամբ եւ վրէժխնդրական դատերուն ու գործերուն կը հետապնդէի առաւելապէս, որոնք սակայն կը լինէին յաճախ փառաւոր, եղերգական, վայրենական եւ դիւցազնական:

« Երկու տարիէ ի վեր կը լսէի միայն խօսուիլն արեւոյն գնի, եւ Գորսիքեան այն սոսկալի նախապաշարումի մատին, որ կը բաւէ նախատինքի վրէժը լուծել զայն ընող անձէն, իր յաջորդներէն և կամ իր ազգականներէն: Նոյն իսկ տեսել եմ ծերերուն, տղայոց եւ բարեկամներու խողխողիլը: Ամբողջ գլուխս լեցուած է այս տեսակ պատմութիւններով:

« Օրին մէկը լիեցի որ Անգղիացի մը երկար տարիներու համար ծովածոցէն հեռու գտնուող փոքրիկ ամառանոց մը վարձելու եկած էր: Անդդիւացին Մարսիլիայէն անցած ժամանակ բերած էր հետը Քրանսայի ծառայ մըն ալ:

« Առանձինն կ'աղբէր իր բնակավայրին մէջ եւ ամէն մարդ իսկոյն զրադեցաւ այս տարօրինակ ա՛նձնուրութեամբ: Դուրս կ'ելլէր միայն որսորդութեան եւ ձկնորսութեան համար: ո՛չ մէկու մը հետ կը խօսէր, քաղաք չէր գար բնաւ. իսկ ամէն առաւօտ մէկ կամ երկու ժամ ատրճանակ եւ կարբին արձակելու վարժութիւն կ'ընէր:

« Զրոյցներ չըլեցան անոր վրայ: Ոմանք կարծեցին թէ այս մարդը առեւտրական խնդիրներու պատճառաւ հեռացած է իր երկրէն. ուրիշներ յետոյ հաստատեցին թէ՛ զարհուրելի ոճիւր մը գործած ըլլալուն համար ծածուկ կը պահէր ինքզինքը: Նոյն իսկ կը թուէին մասնաւորապէս սոսկալի պարագաներ:

« Իբրեւ հարցաքննիչ, քանի մը տեղեկութիւններ առնել ուզեցի այս մարդու մասին. սակայն անկարելի եղաւ ինձ անոր նկատմամբ բան մը իմանալը, Տե՛ր ձօճ Ռաուել կը կոչուէր միայն: Ուստի բաւականացայ միայն մօտէն հսկել վրան, բայց չէի տեսներ այնպիսի բան մը, որ կասկած յարուցանէր անոր վրան:

« Սակայն նկատելով որ հասարակաց կարծիքներն հետզհետէ

շարունակուելով կը խոչորնային ու կ'ընդհանրանային, ես ալ մը-տադրեցի անձամբ փորձ մ'ընել տեսնելու այդ օտարականը, եւ ամարանոցին շրջականերուն վրայ սկսայ որսալ:

« Երկար ժամանակ առթի մը սպասեցի, որ ներկայացաւ կա-քաւի մը առիթով, զոր սպաննած էի նոյն իսկ Անդրիացիին քթին առջեւ: Շունս ինձ բերաւ կաքաւը, զոր առնելով անմիջապէս գացի ներողութիւն խնդրելու իրմէ՝ աղաչելով որ Տէր Ճօն Ռա-ուէլ ընդունի այդ անշնչացած թռչունը:

« Հերակլեան ցեղէն բարձրահասակ և թիկնեղ մարդ մ'էր այս, անվրդով եւ կրթեալ, որուն մագերն ու մօրուքը կարմրափայլ գոյն մ'ունէին: Կոշտութիւն չունէր բնաւ, եւ Անդր-Մանչեան շեշտաւոր ֆրանսերէնով մը խորապէս շնորհակալութիւն յայտնեց ինձ փափկանկատութեանս համար: Հինգ անգամ խօսակցած էինք ամսուան մը մէջ:

« Վերջապէս երեկոյ մը, երբ կ'անցնէի անոր տան դրան առջե-ւէն, նշմարեցի որ պարտէզին մէջ, աթոռի մը վրայ նստած կը ծխէր: Բարեւեցի զայն, ներս հրաւիրեց զիս գաւաթ մը գարե-ջուր խմելու համար: Երկրորդել չտուի անոր հրաւերը:

« Անդրիական խղճամիտ քաղաքավարութեամբ մը հիւրընկա-լեց զիս, եւ գովասանքով խօսելով Ֆրանսայի եւ Գորսիքայի վը-րայ՝ յայտարարեց թէ շատ կը սիրէր այս երկիրն ու այս եզերքը:

« Այն ատեն մեծ զգուշութեամբ և շատ կարեւոր չափի մը պատրուակին տակ հարցումներ կ'ընէի անոր՝ իր կեանքի և ծրա-գիրներու մասին: Առանց վարանուով պատասխանեց ինձ և պատ-մեց թէ շատ երկար ժամանակ ճամբորդած է Ափրիկէի, Հնդկաս-տանի եւ Ամերիկայի մէջ, եւ խնդալով աւելցուց.

« — Ո՛հ, շատ պատահարներու հանդիպեցայ:

« Յետոյ որսորդութեան վրայ խօսացայ եւ ան մանրամասն տեղեկութիւններ տուաւ ինձ գետածիի, վագրի, փիղի եւ նոյն իսկ կօրիյի որսորդութեան մասին:

« — Ահաւի՞ր են բոլոր այս կենդանիները:

« — Ո՛հ, ո՛չ, պատասխանեց խնդալով, ամէնէ սոսկալին մարդն էր, եւ սկսաւ ինքնագոհ Անդրիացիի մը քրքիչով խնդալ — մարդ ալ շատ որսացած եմ:

« Յետոյ երբ զէնքի վրայ խօսեցայ, իր սենեակն հրաւիրեց զիս տարբեր դրութեամբ հրացաններ ցուցնելու համար: Ոսկիէ ասեղնագործուած սեւ մետաքսով կահաւորուած էր սրահը, ու նսեմաստուեր կերպասին վրայ կը վխտային դեղին մեծ ծաղիկ-ներ, որոնք կրակի նման կը բոցավառէին:

« — Յայտարարեց թէ՛ ճարտնական ասուի մըն էր այս:

« Սակայն ամէնէն աւելի ուշադրութիւնս գրաւեց տարօրինակ բան մը. որ կը գտնուէր ամէնէն լայն երեսքին (panneau) մէջտեղը : Սեւ առարկայ մը կը փրթէր կարմրափայլ թաւիչի քառակուսիի մը վրայէն : Մօտեցայ . մարդու ձեռք մ'էր այն : Ո՛չ թէ կմախքի մը սպիտակ եւ մաքուր ձեռքը , այլ չորացած սևորակ ձեռք մը , դեղին եղունգներով , մերկացած մկաններով եւ հին ժամանակի մէջ թափուած կեղտի նման արեան հետքերով , որոնք կը գտնուէին դէպի ծղիի մէջտեղը յառաջացող եւ կացինի հարուածով կտրուած ոսկորներուն վրայ :

« Երկաթեայ ահագին շղթայ մը դաստակին շուրջը հաստատուելով կցուած էր այս անմաքուր անդամին , զոր կը միացնէր պատէն բաւական զօրաւոր օղակով մը , ա՛յնչափ զօրաւոր , որ կրնար զսպել նոյն իսկ ազատ թողուած փիղ մը :

« Հանդարտութեամբ պատասխանեց Անգլիացին . « Մեծագոյն թշնամիս էր այս , որ Ամերիկայէն կուգար . ձեռքը սրով մը յօշոտուելով եւ հագիւ խիճաքարով մը մորթաղերծ լինելով՝ ութ օր շարունակ չորցուած էր արեգակին մէջ : Ա՛՛՛՛ , ինձ համար շատ լաւ է այս բանը » :

« Ծօշափեցի մարդկային այս միացորդը , որ թերեւս կը վերաբերէր յաղթահասակ անձի մը . խիստ երկար մատները կապուած էին ահագին լարերով եւ զորս աստիճանաբար կը բռնէին բարակ փոկերը : Սոսկալի էր տեսնելն այս ձեռքը , որ այսպէս մորթաղերծ եղան , բնականօրէն խորհիլ պիտի տար վայրենի վրէժխնդրութեան մասին :

« — Ըսի թէ՛ այս մարդը շատ զօրաւոր պէտք էր ըլլալ :

« Քաղցրութեամբ պատասխանեց .

« — Ո՛հ , այո՛ , սակայն ես անկէ աւելի զօրաւոր էի , զայն բռնելու համար անոր ձեռքն անցուցի այս շղթան :

« Կարծեցի թէ կը զուարճաբանէր , ուստի յարեցի :

« — Հիմա բոլորովին անօգուտ է այս շղթան , ձեռքը չպիտի կրնայ պրծիլ :

« Անգլիացին պատասխանեց լրջօրէն :

« — Նա միշտ կ'ուզէր երթալ ասկէ : շղթան անհրաժեշտ էր :

« Երեսը նայեցայ հասկնալու համար թէ չէ՞ր կատակեր արդեօք : Բայց անթափանց , անվրդով և բարեացակամ կը մնար կերպարանքը : Ուրիշ նիւթերու վրայ ալ խօսեցայ ու քիչ մը վերջը հրաժեշտ առի :

« Ամբողջ տարի մը անցաւ . նոյեմբերի վերջերը , առաւօտ մը , ծառաս արթնցնելով զիս իմացուց ձօն միառնելի սպանութիւնը , որ տեղի ունեցած էր նոյն գիշերը : Կէս ժամ յետոյ

գլխաւոր ոստիկանապետին հետ կը մտնէի Անգլիացիին տունը :

« Երբ ծոն Ռաուէլի սրահը մտայ, առաջին ականարկով նշմարեցի դիակը որ սենեակին ճիշդ մէջտեղը տարածուած էր կռնակին վրայ : Բաճկոնակը պատուած էր և թեզանիքը լողկտուած . ասոնք կը նշանակէին թէ սաստիկ կռիւ մը տեղի ունեցած էր : Խեղդամահ եղած էր անգլիացին : Զգուելի արհաւիրք մը կը թուէր յայտնել անոր սեւաթոյր, ուռած և զարհուրելի դէմքը : Բան մը կը պահէր կարծես իր սեղմուած ակռաներուն մէջ, և արիւնով ծածկուած էր անոր հինգ ծակերէ խոցուած վիզը : Բժիշկ մը միանալով մեզ, մարմինին վրայ քննեց երկար ժամանակ մատնե-
րուն հետքերը և այս տարօրինակ խօսքերն արտասանեց .

« — Պիտի ըսէի թէ կմախքէ մը խեղդամահ եղած է :

« Սարսուռ մը ունեցայ և պատին վրայ ուղղեցի ականարկս դէպի այն տեղը ուր երբեմն անսեր էի մորթազերծ սողկալի ձեռքը, որ սակայն աներեւոյթ եղեր էր . խորտակուած շղթան կը կախուէր պատն ի վայր : Այն ատեն խոնարհելով մեռեալին վրայ, գտայ անոր կարկամած բերնին մէջ այն աներեւութացած ձեռքի մատներէն մին, որ ատամներով կտրուած էր ճիշդ երկ-
րորդ մատնոսկրէն :

« Յետոյ քննութեան ձեռնարկեցին, սակայն ոչինչ կրցան ե-
րեւան հանել : Ոչ մէկ դուռ, ոչ մէկ պատուհան խորտակուած էր և ոչ մէկ կարասի խանգարուած : Երկու պահապան շուներն ալ արթնցած չէին : Ծառան յայտարարեց թէ տէլը քանի մը ամիսէ ի վեր յուզուած կ'երեւէր և ժամանակ առ ժամանակ կիսով չափ այրուած նամակներ կ'ստանար : Յաճախ զայրոյթի վայրկեաննե-
րուն խարազան մը առնելով կը ձաղկէր այս չորցած ձեռքը :

« Աներեւութացած ձեռքի մասին գիտցածս հաղորդեցի ատենակալներուն և կառավարութեան պաշտօնեաներուն, որոնք մանրակրկիտ խուզարկութիւն մը ըրին ամբողջ կզիւն վրայ, սա-
կայն ոչինչ կարողացան երեւան հանել :

« Ահաւասիկ, տիկիններ, պատմութիւնս, որով աւելի բան մը չգիտեմ » :

— Սակայն, գոչեց կին մը, ձեր կարծիքով ի՞նչ կը նշանակէ ատիկա :

— Կը կարծեմ թէ, մեռած չէր այդ ձեռքի օրինական տէրը որ իրեն մնացած ձեռքովը եկած էր փնտռել միւսը :





Ի՞նչ սրտագողերէ և ի՞նչ ուրախութիւններէ կ'անցնի սա տղան մինչեւ որ կը յաջողի գողցած սեխը կուշտ ու կուռ ուտելու: Գողուլիւնը մեծ մեղք է, իրաւ, բայց այս խեղճ մանջուկն ալ արժանի չէ՞ միթէ այդչափ փորձութիւններէն անցնելէ ետքը պատառ մը կրծեկու սեխէն որ համով ալ կ'երեւայ:

Դուք պահ մը ինքզինքնիդ այդ տղուն տեղը դրէք, և նկարագրեցէք թէ ի՞նչ կ'զգայ ան:

Մինչեւ Նոյեմբերի վերջը մեր ձեռքը հասած գրութիւններէ որը որ առաջին դատուի, պիտի ընդունի յաջորդ 1904 չրջանի մէկ տարեկան ՀԱՆՐԱԳԻՏԱԿ: — Երկրորդ դատուած գրութեան տիրոջ պիտի նստի ընդ 1904 տարւոյ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏԱՐԵՑՈՅՑ մը որ նախորդ տարիները գերազանցող պարունակութեամբ մը կը հրատարակուի:

ՄԱՄԼՈՅ ՏԱԿ**ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏԱՐԵՑՈՅՑ**

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆԻ

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Ամէնէն Ժողովրդական, Ամէնէն Զուարճալի

Ե Ի

ԱՄԷՆԷՆ ՇԱՏ ԾԱԽՈՒԱԾ ԸՆԴԱՐՁԱԿ ՕՐԱՅՈՅՑԸ

ՀԱՆՐԱԳԻՏՄԱԿԻ Խմբագրութեան, Բաժանորդագրութեան եւ
 ո՛ր եւ է գործառնութեան առթիւ հարկ եղած դիմում, գրութիւն
 կամ նամակ պէտք է ուղղուին միմիայն

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆԻ

որ միակ վարիչն ու պատասխանատուն է թերթին :

ԿԱՐԵՒՈՐ ԶԵԿՈՅՑ

Հանգրագիտակի Մեծ. Բաժանորդներէ և Գործակալներէ կը
 խնդրենք որ բաժանորդագիւններէ և յանձնարարութիւններէ մը-
 նացած պարտքերնին վճարել բարեհաճին այլևս, որովհետեւ
 տարւոյն ինն ամիսը լրանալէն վերջը՝ դեռ չատ տեղեր սոյնօրի-
 նակ հաշիւներ անվճար կը մնան :

ԽՄԲԱԳՐԱՊԵՏ-ԱՐՏՕՆԱՏԵՐ
ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆՏՊԱԳՐԻԶ-ՀՐԱՏԱՐԱԿԻԶ
ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆԻ

Կ. Պոլիս, Պապը Ալի ճատտէսի, Թիւ 38

1374

1374

1374

1374

1374

1374

1374

1374

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ՇԱՔԱԹԱԿԱՆ

Նոր տարիէն սկսեալ Հանրագիտակ կը հրատարակուի շաբաթական 20-24 էջէ բաղկացեալ. եւ ամէն ամսոյ մէջ մէկ թիւը պիտի յատկացուի Առաջնորդ վանառականացի, 24 էջ:

Վեցամսեայ ու Եռամսեայ բաժանորդագրութիւն չընդունուիր:

Տ Ա Ր Ե Կ Ա Ն Գ Ի Ն Ն Է

Պոլսոյ համար

30 դրուշ

Գաւառաց »

35 »

Արաասահման

45 »

Հատը

30 փարայ

ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ ԳՈՐԾԱԿԱԼՔ

Ամասիա, Հայկազուն էֆ. Խանդամուր
Ասաբազար, Աշոտ էֆ. Պաղ զազեան
Ասանա, Յակոբ էֆ. Տ. Պօղոսեան
Գօնեա, Տիգրան էֆ. Յ. Տիւրկէրեան
Ներսիս, Խաչիկ էֆ. Գ. Թաշճեան
Ներսիս, Պարոյր էֆ. Արզուման
Զմիւռնիա, Կարապետ էֆ. Մալէճանեան
Էրզրում, Տիգրան էֆ. Բրուտեան
Էրպա՛ա, Կարապետ էֆ. Գօճանեան
Թեֆիսաղ, Ասատուր էֆ. Արսէնեան
Խաբերդ, Կ. էֆ. Մ. Յովսէփեան
Կեսարիա, Երուանդ էֆ. Երկաթեան
Կիւրին, Գրիգոր Մ. էֆ. Խանդամուր
Հալեպ, Ս. էֆ. Ամատեան
Հիւսէյնիկ, Կ. էֆ. Մ. Յովսէփեան
Մալաթիա, Գրիգոր էֆ. Թաշճեան
Մարաշ, Արժ. Տ. Ներսէս Քհ. Շահինեան
Մարզուան, Ա. էֆ. Կ. Կիւլպէնկեան
Միացեալ-Նահանգներ, Մ. Մ. Քարակալուրեան և Հնկ.
Նիկոմիդիա, Յակոբ էֆ. Տ. Ազարեան
Պարսիգակ, Ստեփան էֆ. Մակարեան
Սամսօն, Յովհաննէս էֆ. Նիքսարեան
Սրվազ, Մանուկ էֆ. Պէլլէրեան
Սիւմհանի ֆեոյ Ա. էֆ. Կ. Կիւլպէնկեան
Վեզիր ֆեօրիւ » » »
Տիարպէֆի, Լեոն էֆ. Սրապեան
Օրսու՝ Յովհաննէս էֆ. Հէքիմեան

Քանի մը տեղերէ, ուր Գործակալ չունինք, կը հարցնեն թէ Հանրագիտակի բաժնեգիրն եւ կամ մանր յանձնարարութիւններու փոխարժէքը ի՞նչպէս ղրկելու է:

— Ամէնէն պարզ միջոցն է Օսմ. նամակադրոշմ՝ դնել նամակին մէջ եւ նամակն ալ ապահովագրել (քանիւս ընել): Նամակագրոշմ կրող նամակները ապահովագրելը անհրաժեշտ է, որովհետեւ մեր ձեռքը չհասած ժամանակ, երբէք պատասխանատու չգղք: